ԱԶԳԱՅԻՆ.

—

Անցեալ 4-ին Սրբոց Հարցն Եգիպտացւոց տօնի օրը վայելուչ պատշաճաւորութեամբ կատարուեց Վեհափառ Հայրապետի ա-նուանակոչութեան յիշատակը։

Վեհափառ Հայրապետը հանդիսաւոր թափօրով Եկեղեցի եկաւ։ Ցատկացեալ մաղթանքը կատարուեց Վեհարանի Ընդունելութեան Դահլիճում. Վեհափառ Հայրապետը Պահպանիչով օրհնեց բոլորին և խօսքը դէպի հոգևորականները դարձնելով՝ ասաց. «Անարատ կեանք և սուրբ վարք սրբոց հարցն Եգիպտացւոց օրինակ լիցին մեզ ամենեցուն, կեանք մեր և վարք օրինակ լիցին ժողովրդեան մերում. որպէս զի տեսցեն զգործս մեր բարիս և փառաւորեսցեն զՀայր մեր որ յերկինս է» . . . . ։ Ի շնորհաւորութիւն անուանակոչութեան Վեհափառ Հայրապետի՝ Նորին Վեհափառութեան սուրբ Աջը համբուրեցին և օրհնութիւնը առան միաբանական ուխտը։ Ճեմարանականք Վաղարշապատու հոգևոր-ծխական դպրոցաց երկսեռ աշակերտները և այլք. միաբանից սեղանատանը հանդիսաւոր ճաշ և երեկոյեանը ճրագալոյց կար։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Պատկի սուրբ խորհուրդը կատարելու համար մեր ժողովրդեան մէջ զանազան տարակուսութիւն կան, ոմանք կարծուումեն թէ մի և նոյն քահանայն մի և նոյն օրը երկու պատկի խորհուրդ չէ կարող կատարել, այլք թէ մի և նոյն եկեղեցում՝ երկու պատկի խորհուրդ չի կատարուիլ. այս տարօրինակ կարծիքները ոչինչ հիմնաւոր պատճառ չունին, այլ՝ թէ մի և նոյն եկեղեցում երկու և շատ պատկի խորհուրդ կարող են կատարուել, և թէ մի և նոյն քահանայն կարող է մի և նոյն օրը երկու և աւելի պատկի խորհուրդներ կատարել։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

Պանդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս 18 Դեկտեմբերի ընդ համաբաւ 740 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արականաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Ջաջուռ կեղջ՝ բարեկրօն Ցարութիւն քահանայն տէր Ռափայէլեանց և պատուելիք՝ երեցփոխան Մխիթարն Ղազարեանց և Կարապետն Պետրոսեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ,8 Դեկտ. ընդ համարաւ 741
հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արականաց ուսումնարանի Հայոց Ղամարլու գեղջ՝ բարեկրօն Վարդան քահանայն Վարդանեանց և պատուելիք երեցփոխան Թադէոսն Մահաեսի Վարդանեանց և Օհանն Բաբախանեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ,8 Դեկտ. ընդ համարաւ 742
հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկսեռից ուսումնարանաց Ս. Մարիամ և Ամենափրկիչ եկեղեցեաց Հայոց Աշտարակ գեղջ՝ բարեկրօն Սարգիս աւագ քահանայն Բզնունի և պատուելիք երեցփոխանքն Դօլվաթն Սուքիասեանց, Յակովբն Աղումեանց, Բէկլարն Հուխեանց և Ռուստամն տէր Յովհաննիսեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 12 Դեկտ. ընդ համարաւ 759
հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արականաց ուսումնարանի Հայոց Բէնկլի-Անմէտ գեղջ՝ բարեկրօն Վարդան քահանայն տէր Վարդանեանց և պատուելիք երեցփոխան Աւետիսն Ներսիսեան և Պետրոսն Բագարատեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 15 Դեկտ. ընդ համարաւ 768
հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական Ս. Գրիգորեան միդասեան արականաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Վարազաբոյն գեղջ՝ բարեկրօն Գրիգոր քահանայն տէր Յովհաննիսեանց և պատուելիք երեցփոխան Աւագն Պետրոսեան և Ասրին Ղուկասեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 15 Դեկտ. ընդ համարաւ 769
հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական Ս. Սահակեան միդասեան արականաց ուսումնարանի Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ Հայոց Թաղլար գեղջ՝ բարեկրօն Պետրոս քահանայն տէր Դանիէլեանց և պատուելիք՝ երեցփոխան Աւետիսն Բէջանեանց և Կարապետն Բարաշեանց։

—